ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաշվեքննիչ պալատի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2018 թվականի հունվարի 16-ի ՀՕ-58-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում՝

1) 13-րդ կետում «բաղաքացիական ծառայող» բառերից հետո լրացնել «, փորձագետ և մասնագետ» բառերը.
~~1)~~2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 16-րդ կետ~~ով~~.

«16) **ընթացիկ եզրակացություն**՝ սույն օրենքով սահմանված կարգով իրականացված հաշվեքննության արդյունքում կազմված և պալատի կողմից հաստատված փաստաթուղթ.»,

~~2)~~3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 17-րդ կետ~~ով~~.

«17) **հաշվեքննության արձանագրություն**՝ սույն օրենքով սահմանված կարգով հաշվեքննողի կողմից հաշվեքննության արդյունքների վերաբերյալ կազմված և իր ստորագրությամբ հաստատված փաստաթուղթ:»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը ~~լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով~~ շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Հոդված 6. Միջազգային համագործակցությունը և ստանդարտները

1. Հաշվեքննիչ պալատը հաշվեքննության մեթոդաբանության և դրա իրականացման առաջավոր փորձի փոխանակման նպատակով համագործակցում է արտաքին պետական հաշվեքննություն իրականացնող բարձրագույն աուդիտորական մարմինների և նրանց միջազգային կազմակերպությունների հետ:

2. Հաշվեքննիչ պալատը կարող է մշակել ուղեցույցներ, մեթոդաբանություն՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներով:»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 9. ~~Հաշվեքննիչ պալատի գործունեության ~~ օ~~O~~ր~~ի~~նականության, գաղտնիության, ազնվության, բանիմացության սկզբունք~~ներ~~ը~~ը~~**

1. ~~Հաշվեքննիչ պալատն իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում է օրինականության, գաղտնիության, ազնվության, բանիմացության սկզբունքներով: Հաշվեքննիչ պալատի անդամները և հաշվեքննողները՝ գործում են միայն օրենքով իրենց վերապահված գործառույթների շրջանակներում, չեն կարող տարածել իրենց հասանելի՝ օրենքով գաղտնիք համարվող տեղեկատվությունը, բազմակողմանի ուսումնասիրում են իրենց տրամադրված ողջ տեղեկատվությունը, պետք է ունենան համապատասխան որակավորումներ և գիտելիքներ:~~»~~:~~

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածը ~~ուժը կորցրած ճանաչել ի գործողությունը դադարեցնել~~:

~~**Հոդված 5.** Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասում «եզրակացությունները,» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ եզրակացությունները» բառերը:~~

Հոդված ~~6~~5. Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մաս~~ի~~ը ~~ուժը կորցրած ճանաչել գործողությունը դադարեցնել~~:

Հոդված ~~7~~6. Օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասում «քաղաքացիական ծառայողների» բառերը փոխարինել «հաշվեքննողների» բառով:

Հոդված ~~8~~7. Օրենքի 40-րդ հոդվածի~~.~~

~~1)~~ 1-ին մասի 2-րդ նախադասությունը հանել,

~~2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 մասով.~~

1) ~~«1.1 Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ եզրակացությունները Ազգային ժողով է ներկայացնում սույն օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում և կարգով:»:~~

Հոդված ~~9~~8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: